

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը Ընդլայնված սևծովյան տարածաշրջանի ժողովրդավարացման գործընթացում

Աշոտ Ալեքսանյան

քաղաքական գիտ. թեկնածու,
քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
Երևանի պետական համալսարան
Հեռ./Ֆաքս: 551334
Էլ.-փոստ՝ ashalex@ysu.am
ashalexanyan@yahoo.com

Արդի ժողովրդավարական քաղաքական համակարգերում առանձնահատուկ նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության ինստիտուտները, որովհետև *քաղաքացիավարությունը (civiliarchy)* ազգ-պետությունների ներքին և արտաքին ինտեգրման երաշխիքն է:

Կարևորելով հասարակական ինստիտուտների ժողովրդավարացումը՝ Ա.Մելվիլը դիտարկում է «ժողովրդավարացման վերազգային և միջազգային պայմանները», Է.Գելները՝ «քաղաքացիական հասարակության առավելությունները», Ջ.Բեթգինսկին՝ «հեգեմոնիստական ժողովրդավարության երկրնորանքները», Ֆ.Ջաքարիան՝ «անազատ ժողովրդավարությունը», Յ.Գալթունգը՝ «ժողովրդավարության ու պատերազմողության հարաբերությունը», Ի.Վալերստայնը՝ «աշխարհամշակույթի զարգացումն ու փոխակերպումը»¹:

¹ Այդ նախն տե՛ս *А.Ю. Мельвилъ*. Становление транснациональной политической среды и «волны» демократизации, // Современные международные отношения и мировая политика: учебник (*А.В. Торкунов, И.Г. Тюлин, А.Ю. Мельвилъ* и др.). М.,2005, с.127; *Э.Геллнер*. Условия свободы. Гражданское общество и его исторические соперники. М.,2004, с.206-212; *Зб.Бжезинский*. Выбор. Глобальное господство или глобальное лидерство. М.,2005, с.229, 251-267; *Ф.Закария*. Будущее свободы: нелиберальная демократия в США и за их пределами. М.,2004, с.87-116; *Յ.Գալթունգ*, Խաղաղություն խաղաղ միջոցներով. Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր.,2005, էջ 90-106; *И.Валлерстайн*. После либерализма. М.,2003, с.157-167 և ուրիշներ:

Հաշվի առնելով Ընդլայնված սեփական տարածաշրջանում ձևավորված միջպետական, ազգամիջյան, միջմշակութային և միջկրոնական հարաբերությունների, անվտանգության երաշխիքների², հակամարտությունների և հակասությունների մակարդակը՝ ակնհայտ է, որ դրանք ունեն և՛ դրական, և՛ բացասական նշանակություն տարածաշրջանային ժողովրդավարացման ռեժիմի վրա: Առկա հիմնախնդիրների լուծման համատեքստում քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ունեն և կարող են ունենալ էական դերակատարում ներպետական, տարածաշրջանային և միջազգային ինտեգրման գործընթացներում: Դրանք յուրահատուկ մեխանիզմներ են և համագործակցության մոդելներ հանրային մյուս հասատատությունների համար:

Հեռանկարային զարգացման համատեքստում քաղաքացիական հասարակության ինստիտուտները կարող են նպաստել *տարածաշրջանային քաղաքացիավարական համակարգի*³ կայացմանը: Ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա ստեղծելու մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության տարածաշրջանային արդյունավետ ընթացակարգեր: Այն կարող է ունենալ հետևյալ զարգացման մակարդակները՝ հասարակական կազմակերպություններ, արհմիություններ, ՁԼՄ-ներ, քաղաքացիական բազմաբնույթ միավորումներ, կրոնական կազմակերպություններ:

Այդ ինստիտուտներն առանցքային նշանակություն ունեն *աստիճանական ինտեգրման* հնարավորությունների համատեքստում, որոնք նախապայմաններ են ստեղծում մարդկային և ազգային ներուժի ինքնաիրացման համար: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների պատշաճ ներգրավվածության դեպքում ներազգային և տարածաշրջանային ինտեգրումը կապահովի հավասարաչափ զարգացում: Այս առումով տարածաշրջանային ինտեգրման

² Այդ մասին տե՛ս *E.B. Rumer, J.Simon*. Toward a Euro-Atlantic Strategy for the Black Sea Region. W.,D.C.,2006, p.19-20, *F.Tassinari*. A Syneregy for Black Sea Regional Cooperation: Guidelines for an EU Initiative, // CEPS Policy Brief, No.105/June 2006, p.1-15, *M.Vahl*. The EU and Black Sea Regional Cooperation: Some Challenges for BSEC, CEPS Commentary, 15, Centre for European Policy Studies, Brussels, April.

³ Տե՛ս *A.Alexanyan*. The Civiliarchic Transformation of Civil Society in Armenia: Civiliologic Discourse, in: *A. Gunes-Ayata, A.Ergun, I.Celimli* (eds.): Black Sea Politics. Political Culture and Civil Society in an Unstable Region (International Library of Political Studies 8). L.,N.Y.,2005, p.130-40.

ընթացակարգերը «հասարակական փոխներթափանցման» ինքնատիպ եղանակ է, որի արդյունավետության գնահատման չափանիշը հենց *քաղաքացիավարական կայունությունն է*:

Տարածաշրջանային քաղաքացիական հասարակության ինստիտուտները կարող են ապահովել «օբյեկտիվ խմբերի» ոչ միայն հանրային որոշումների ընդունման, այլև նախապատրաստման, իրականացման և վերահսկման գործընթացներին: Ռա քաղաքացիական «զսպումների և հակակշիռների» բաղադրիչներից մեկն է:

Սակայն տարածաշրջանային զարգացումների համատեքստում արդյո՞ք եվրաստլանտիկ ինստիտուտների⁴ ռազմավարության փոխակերպումները կարող են հանգեցնել քաղաքացիավարական վարչակարգի կայացմանը: Ինչպիսի՞ քաղաքացիական հասարակության տիպն է առավելապես համապատասխանում արդի ժողովրդավարական պետության կառուցվածքին: Ինչպիսի՞ քաղաքացիական իշխանությունը կկարողանա ապահովել գլոկալ ժողովրդավարացումը: Այլ կերպ ասած, ինչպե՞ս են տարածաշրջանային վարչակարգերը հարաբերվում քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման դինամիկային:

Համաշխարհայնացման գործընթացների համատեքստում գլոկալ կառավարման համակարգը ենթարկվում են բազմաբնույթ մարտահրավերների: Վերազգային և ազգային քաղաքակրթությունների զարգացումը հանգեցնում է ոչ թե հակամարտությունների կարգավորմանն ու նվազեցմանը, այլև դրանց առավել քան ծայրահեղ դրսևորումներին: Վտանգվում են հասարակական հարաբերությունների հետագա զարգացումը ոչ միայն գլոբալ, տարածաշրջանային, այլև ազգային մակարդակներում: Իսկ դա այն դեպքում, երբ քաղաքացիական «վերընթաց զարգացման» և հետընթացի խնդիրները պահանջում են հաշվի առնել քաղաքականության սուբյեկտների բազմաբնույթ պահանջումներն ու շահերը:

⁴ Այդ մասին տե՛ս *J.Simon*. Preventing Balkan Conflict: The Role of Euroatlantic Institutions, // Strategic Forum, No.226, April 2007, p.1-8.

Տարածաշրջանային քաղաքացիական հասարակության ինստիտուտների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների, համագործակցության լավագույն օրինակ է դեռևս 1998թ. հիմնադրված *Սևծովյան հասարակական կազմակերպությունների ցանցը* (The Black Sea NGO Network (BSNN)), որին անդամակցում են վեց երկրներից (Բուլղարիա, Վրաստան, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա, Ուկրաինա) շուրջ 60 հասարակական կազմակերպություններ և որի կողմից պարբերաբար իրականացվում են համատեղ հետազոտական ծրագրեր: Հիշյալ առումով կարևոր նշանակություն ունեցավ նաև 2004թ. «Բարեկեցիկ Սևծովյան տարածաշրջանի քաղաքացիական հասարակության ֆորումի միջազգային խորհրդի կողմից ընդունված երևանյան բանաձևը (International Council on Social Welfare Black Sea Regional Civil Society Forum), որին մասնակցեցին Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (BSEC) անդամ երկրների հասարակական կազմակերպությունները՝ հաստատելով հետագա համագործակցության ուղղությունները:

Տարածաշրջանային քաղաքացիական հասարակության ինստիտուտների համագործակցության խորացման ուղղությամբ կարևոր նշանակություն ունեն և հետագայում էլ կարող են ունենալ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (BSEC) և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովը (PABSEC), որոնք իրենց աջակցությամբ կխթանեն քաղաքացիական հասարակության միջինստիտուցիոնալ համագործակցությունը: Ընդ որում ոչ միայն ներտարածաշրջանային, այլ նաև միջազգային ու եվրոպական մակարդակում: Այս առումով հատկապես կարևորվում է տարածաշրջանի բոլոր ազգ-պետությունների մասնակցությունը՝ բացառելով մեկուսացվածությունը:

Ամփոփելով, կցանկանայի նշել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ապահովում են ժողովրդավարական վերահսկողության ընթացակարգերի հավասարակշռված գործառնությունը, որոնք ենթադրում են՝

- ձևավորել քաղաքացիական հանդուրժողականության միջավայր գլոկալ և ներազգային մակարդակներում,
- իրականացնել տարածաշրջանային անկախ հետազոտություններ՝ պարբերաբար տեղեկատվություն տրամադրելով հնարավոր զարգացումների վերաբերյալ,
- կազմակերպել ոչ ֆորմալ կրթություն՝ կրթելով և հետևողականորեն բարձրացնելով տարածաշրջանային հանրության ու քաղաքացիների գիտելիքները, ստեղծելով հասարակական կարծիք մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության և ժողովրդավարական կարգի մասին,
- զարգացնել տարածաշրջանային քաղաքացիական հասարակության ինստիտուտների ցանցը՝ հասարակական կազմակերպությունների, արհմիությունների, ՁԼՄ-ների, կրոնական կազմակերպությունների և քաղաքացիական բազմաբնույթ միավորումների մասնակցությամբ: Այն հնարավորություն կտա քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական ու գլոկալ հիմնախնդիրների վերաբերյալ ունենալ տվյալների բանկ: Ինչը դրական ազդեցություն կունենա պետական կառավարման համակարգերի վերահսկողության ու ժողովրդավարության որակի վրա,
- կայացնել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության ինստիտուտները՝ ձևավորելով «հակակշիռների և զսպումների» մեխանիզմ ի հակադրություն ավտորիտար քաղաքական վարչակարգի ու ծայրահեղականության:
- ձևավորել քաղաքացիավարական մշակույթի, քաղաքացիական ինքության և համագործակցության այլընտրանքային մոդելներ՝ նախապայմաններ ստեղծելով

հակամարտությունների կարգավորման քաղաքական
ընթացակարգերի համար: